ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09 հուլիսի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վարդուհի.Հարությունյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Լ. Միքայելյան Գ.Ներսիսյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա.Եղիազարյան, Հ. Թադևոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Շեկոյան:

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում անվադողերի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի 02.07.2018թ. Ժամը՝ 12:00-ի նիստում հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով որոշեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած Մասնակից «Արպանիվ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, տեխնիկական բնութագիրը, արտադրողը և ծագման երկիրը:

2. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

2.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ ճանաչված մասնակից «Արպանիվ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, ինչպես նաև «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Արպանիվ» ՍՊԸ-ին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.3 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

3.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 3-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է անգործության ժամկետ 5 օրացույցային օր տևողությամբ, հաշված պայմանագիր կնքելու որոշման մասին

հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Եթե նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից բողոքարկման խորհրդում չի բողոքարկում, ապա ընտրված մասնակից՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ կկնքվի անվադողերի ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.
Նախագահ՝ ---------- Վ. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Լ. Միքայելյան

2. ---------- Գ. Ներսիսյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. Եղիազարյան

2. ---------- Հ. Թադևոսյան